



«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ

2020թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի միջև 23.03.2020թ.-ի կնքված՝ «Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն՝ ուսումնասիրություններ և փորձաքննություններ» ծրագրի No 1 պայմանագրի կատարման



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»



Ա. ԳՈՒԳԱՐԱՅ



«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի

գլխավոր տնօրենի

պարտականությունները կատարող

01 հուլիսի 2020թ.

«Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն՝ ուսումնասիրություններ և փորձաքննություններ» ծրագրի պայմանագրի շրջանակներում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի ուժերով 2020թ. երկրորդ եռամսյակում իրականացվել են հետևյալ աշխատանքները, ըստ ներքոհիշյալ ենթածրագրերի՝

1. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՑԱՆՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ..... 5

1.1 Ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի տեխնիկական տվյալների հավաքագրում..... 6

1.2 Երթևեկության ինտենսիվության չափումներ և վերլուծություն..... 8

1.3 Աջակցություն պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վերականգնման ծրագրերի մշակմանը..... 18

1.4 Ավտոմոբիլային ճանապարհների գույքագրում, տվյալների շտեմարանի լրացում և վարում..... 18

1.5 Ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում..... 19

2. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԿԱՊԱԼԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՇԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....22

2.1 Կատարված աշխատանքների ընդունման նպատակով միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում: Ավտոմոբիլային ճանապարհների վիճակի գնահատում՝ հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով23

2.2 Կատարված աշխատանքների ընդունման նպատակով ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների, պարսպող համակարգերի պահպանման և գծանշման աշխատանքների աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում: Առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի վիճակի գնահատում՝ հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով24

2.3 Ավրոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների մշտադիտարկում, հսկողություն և գնահատում.....	26
3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ /ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ, ԳՆՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ/ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱԶԱԿՅՈՒԹՅՈՒՆ	27
4. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ/ԿԱՄ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ	28

1. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՑԱՆՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ
ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ
ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1 Ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի տեխնիկական տվյալների հավաքագրում

Հաշվեքու եռամսյակում հավաքագրվել են միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի տեխնիկական տվյալները՝ 451.6 կմ ընդհանուր երկարությամբ: Հետազոտվել են միջպետական նշանակության՝ 442.1 կմ և հանրապետական նշանակության՝ 9.5 կմ ավտոմոբիլային ճանապարհներ: Ուսումնասիրությունը իրականացվում է ակնադիտական (ավտոմոբիլային ճանապարհների ծածկի տեսանելի թերությունների հավաքագրում) և գործիքային մեթոդներով (IRI միջազգային անհարթության գործակցի որոշում): Հավաքագրված տվյալները համատեղելուց և ընթացիկ վերլուծություն իրականացնելուց հետո մուտքագրվում են HDM տնտեսագիտական վերլուծական մոդելում՝ միջնաժամկետ և երկարաժամկետ վերականգնողական ծրագրեր մշակելու նպատակով: Տնտեսապես հիմնավորված միջնաժամկետ և երկարաժամկետ վերականգնողական ծրագրերի առաջարկությունները կներկայացվեն 2020 թվականի ամփոփ հաշվետվությունում:

Բոլոր կատարված հետազոտությունների և վերլուծությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

Արդյուն ներկայացվում է հաշվեքու եռամսյակում հետազոտված միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների անվանացանկը.

Հեղափոխված ճանապարհահատվածների ցանկ

N	Ճանապարհի անվանումը	I կարգ, կմ	Այլ կարգեր, կմ	Ընդամենը, կմ
1.	2.	3.	4.	5.
Միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ				
1.	Մ-4 Երևան – Սևան – Իջևան – Ադրբեջանի Հանրապետության սահման կմ 10+300 – կմ 73+300	63		63
2.	Մ-5 Երևան – Արմավիր – Թուրքիայի Հանրապետության սահման կմ 10+400 – կմ 63+100	41.6	11.1	52.7
3.	Մ-10 Սևան – Մարտունի – Գեղարսի – /Մ-2/		124.0	124.0
4.	Մ-14 /Մ-4/ – Շորժա – Վարդենիս		97.8	97.8
	Ընդամենը՝	104.6	232.8	337.5
	Ընդամենը՝ (ներառյալ I տեխ. կարգը)			442.1
Հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ				
1.	Հ-19 Աշտարակ – Օշական – /Մ-3/		9.5	9.5
	Ընդամենը՝		9.5	9.5
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ՝ (ներառյալ I տեխ. կարգը)				451.6

Բոլոր կատարված հեղափոխությունների և վերլուծությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

1.2 Երթևեկության ինտենսիվության չափումներ և վերլուծություն

Հայաստանի Հանրապետության 3 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների 5 կետերում տեղակայված են ավտոմոբիլային տրանսպորտի ինտենսիվությունը չափող 5 առցանց աշխատող SIEMENS մակնիշի հաշվիչներ:

Ստացված ինտենսիվության տվյալները հանդիսանում են HDM-4 տնտեսագիտական վերլուծության ծրագրի մուտքային տվյալ (AADT – միջին օրական ինտենսիվությունը տարվա կտրվածքով):

Հաշվիչները տեղակայված են հետևյալ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա.

Կետ No1 Մ-2 Երևան – Երասխ – Գորիս - Մեղրի – Իրանի Իսլամական Հանրապետության սահման ա/ճ-ի կմ 298+000 (Կապանի ՃՇՇ-ի մոտ) – 1 հաշվիչ

Կետ No2 Մ-2 Երևան – Երասխ – Գորիս - Մեղրի – Իրանի Իսլամական Հանրապետության սահման ա/ճ-ի կմ 367+250 (Մեղրու ՃՇՇ-ի ա/բ գործարանի մոտ) – 1 հաշվիչ

Կետ No3 Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման - Մարգարա - Վանաձոր – Տաշիր - Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 126+000 (Լոռու ՃՇՇ-ի մոտ) - 1 հաշվիչ

Կետ No4 Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման - Մարգարա - Վանաձոր – Տաշիր - Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 135+160 (Պուշկինի թունելի մոտ) – 1 հաշվիչ


Կետ No5 Մ-4 Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի Հանրապետության սահման ա/ճ կմ 80 +000 (Դիլիջանի թունելի մոտ) – 1 հաշվիչ

Հաշվելու եռամսյակում կատարվել են Հայաստանի Հանրապետության 3 միջպետական ավտոճանապարհների 5 կետերում տեղակայված հաշվիչների կարգաբերման աշխատանքներ և հաշվիչների տվյալների հավաքագրում:

Հաշվելու ժամանակաշրջանում տեղակայված առցանց աշխատող հաշվիչների տվյալների միջին օրական ինտենսիվությունը հետևյալն է.


- 1 Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի Իսլամական Հանրապետության սահման ա/ճ-ի կմ 298 (Կապանի ՃՇՇ-ի մոտ)

	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ բանսպորտային միջոցների դասակարգման (ավտոմոբիլ)		
		թեթև մարդատար 1	բեռնատար 2	բեռնատար կցորդով 3
Ընդամենը	5309	4734	449	126




2 Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի Իսլամական Հանրապետության սահման ա/ճ-ի կմ 367+250 (Մեղրու ՃՇՇ-ի ա/բ գործարանի մոտ)

Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ տրանսպորտային միջոցների դասակարգման (ավտոմոբիլ)		
		թեթև մարդատար 1	բեռնատար 2	բեռնատար կցորդով 3
Ընդամենը	1152	863	169	120




3 Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 126 (Լոռու ՃՇՇ-ի մոտ)

Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ տրանսպորտային միջոցների դասակարգման (ավտոմոբիլ)		
		թեթև մարդատար 1	բեռնատար 2	բեռնատար կցորդով 3
Ընդամենը	7086	6715	290	81




4 Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 135+160 (Պուշկինի թունելի մոտ)

Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ տրանսպորտային միջոցների դասակարգման (ավտոմոբիլ)		
		թեթև մարդափար 1	բեռնափար 2	բեռնափար կցորդով 3
<u>Ընդամենը</u>	3031	2873	112	46




5 Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի Հանրապետության սահման ա/ճ-ի կմ 80
(Դիլիջանի թունելի մոտ)

Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ բանասպորտային միջոցների դասակարգման(ավտոմոբիլ)		
		թեթև մարդատար 1	բեռնատար 2	բեռնատար կցորդով 3
Ընդամենը	5370	4812	343	215




Հաշվելու ժամանակաշրջանում իրականացված չափումների հիման վրա կազմվել է տրանսպորտային միջոցների հոսքի միջին օրական ինտենսիվության համեմատություն՝ ըստ չափման կետերի.

2020թ. երկրորդ եռամսյակի չափումների արդյունքների համեմատական գրաֆիկական պատկերը



2019-2020թթ. երկրորդ եռամսյակի չափումների արդյունքների համեմատական գրաֆիկական պատկերը

հետևյալն է



Ինչպես երևում է 2019-2020թթ. 2-րդ եռամսյակի համեմատական գրաֆիկից ավտոտրանսպորտային միջոցների ինտենսիվությունը

Կետ - 1 Կապանի ՃՇՇ-ի մոտ՝ աճ

Կետ - 2 Մեղրու ՃՇՇ-ի ա/բ գործարանի մոտ՝ նվազում

Կետ - 3 Լոռու ՃՇՇ-ի մոտ՝ նվազում

Կետ - 4 Պուլկինի թունելի մոտ՝ աճ

Կետ - 5 Դիլիջանի թունելի մոտ՝ նվազում

HDM-4 տնտեսագիտական վերլուծության ծրագրի համար անհրաժեշտ մուտքային տվյալները (AADT – տարվա կտրվածքով միջին օրական ինտենսիվությունը) հավաքագրվել են նաև շարժական հաշվիչների միջոցով:

Ըստ շարժական հաշվիչների գրանցման տվյալների, միջին օրական ինտենսիվությունը հետևյալն է.

Միջպետական և հանրապետական ավտոճանապարհներ

No	Ճան կող.	Ճանապարհի անվանումը	կմ	մարդատար	բեռնատար	բեռնատար կցորդով	ընդամենը
1	Մ-1	Երևան – Գյումրի – Վրաստանի սահման	20	24378	651	107	25136
2	Մ-2	Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի Իսլամական Հանրապետության սահման	28	12934	596	175	13705
3			66	2666	311	142	3119
4			121	3772	395	150	4317
5			135	3017	409	154	3580
6			144	2889	402	154	3445
7			235	2602	381	152	3135
8			251	1465	390	144	1999
9			308	4708	404	146	5258

10			330	926	215	120	1261
11			382	1612	243	122	1977
12	Մ-3	Թուրքիայի Հանրապետության սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր – Վրաստանի սահման	13	8778	257	8	9043
13			24	7092	244	16	7352
14			31	7420	251	16	7687
15			41	12706	336	82	13124
16			71	7932	313	80	8325
17			86	7664	302	80	8046
18			108	7146	287	81	7514
19			151	4238	105	46	4389
20			168	2319	41	46	2406
21			176	664	25	46	735
22	Մ-4	Երևան-Սևան-Իջևան- Ադր. Հանրապետության սահման	10	42802	2180	237	45219
23			16	22891	953	221	24065
24			31	19044	874	218	20136
25			47	12079	436	212	12727
26	Մ-5	Երևան – Արմավիր – Թուրքիայի Հանրապետության սահման	12	28424	809	150	29383
27			20	25350	702	148	26200
28			44	13930	400	126	14456
29			52	2287	52	6	2345

30	Մ-7	/Մ-3/- Սպիրտակ – Գյումրի - Թուրքիայի Հանրապետության սահման	3	2015	48	12	2075
31	Մ-12	/Մ-2/ (Գորիս) – Արցախի Հանրապետության սահման	7	1657	96	8	1761
32			28	813	42	8	863
33	Մ-15	Վերին Պարզնի) - Մասիսի տրանսպորտային հանգույց (Երևանի շրջանց)	8	4917	298	62	5277
34			25	1326	49	0	1375
35	Մ-17	/Մ-2/ (Կապան) – Ծավ - /Մ-2/	2	77	7	1	85
36			56	37	5	1	43
37			80	65	6	1	72
38	Հ-4	Երևան - Եղվարդ - Արագյուղ - Հարթավան - /Մ-3/	9	6123	118	4	6245
39			20	687	45	2	734
40			41	1273	51	2	1326

Հաշվետու եռամսյակում տեղադրված հաշվիչներից, ինչպես նաև շարժական հաշվիչներով և ակնադիտական եղանակով տվյալների հավաքագրման նպատակով իրականացվել է 66 այցելություն 45 կետերում:

Կատարվել է հավաքագրված տվյալների ամփոփում, մուտքագրում համակարգիչ և համապատասխան վերլուծություն:

Բոլոր կատարված հետազոտությունների և վերլուծությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

1.3 Աջակցություն պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վերականգնման ծրագրերի մշակմանը

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից, պարբերաբար իրականացվել են հետևյալ աշխատանքները և միջոցառումները.

- տեխնիկական և մասնագիտական աջակցություն ոլորտի խորհրդատուներին,
- մասնակցություն միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինարներին, կոնֆերանսներին և քննարկումներին,
- մասնագիտական աջակցություն «Ճանապարհային ցանցի կառավարման համակարգի» ծրագրային հավելվածը մշակող «Լոկատոր» ՓԲԸ մասնագետներին:

Բոլոր կատարված աշխատանքների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

1.4 Ավտոմոբիլային ճանապարհների գույքագրում, տվյալների շտեմարանի լրացում և վարում

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նախապարտաստական աշխատանքներ, գույքագրվել և տեսաձայնագրվել են միջպետական նշանակության ճանապարհահատվածներ և տրանսպորտային հանգույցներ՝ 120.6 կմ ընդհանուր երկարությամբ:

Գույքագրված ճանապարհահատվածների ցանկ

N	Ճանապարհի անվանումը	I կարգ, կմ	Այլ կարգեր, կմ	Ընդամենը, կմ
1.	2.	3.	4.	5.
Միջպետական նշանակության ավտոճանապարհներ				
1.	Մ-2 Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի Իսլամական Հանրապետության սահման, կմ 9+300 – կմ 121+000	38	73.7	111.7
2.	Մասիսի տրանսպորտային հանգույց		3.25	3.25
3.	Դիմիտրովի տրանսպորտային հանգույց		1.5	1.5

4.	Արտաշատի տրանսպորտային հանգույց		1.2	1.2
5.	Շահումյանի տրանսպորտային հանգույց		0.6	0.6
6.	Ոսկեգետի տրանսպորտային հանգույց		0.85	0.85
7.	Ավշարի տրանսպորտային հանգույց		0.53	0.53
8.	Արարատի տրանսպորտային հանգույց		0.97	0.97
	Ընդամենը՝	38	82.6	120.6

Իրականացվել է դաշտային աշխատանքների ընթացքում հավաքագրված տվյալների ամփոփում և վերլուծություն, ինչպես նաև տվյալների շտեմարանի լրացում և վարում:

Բոլոր կատարված աշխատանքների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

1.5 Ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում

Հաշվետու ժամանակահատվածում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները և միջոցառումները.

1. Տրվել են հանձնարարականներ՝

1.1. Մ-7 ավտոճանապարհի Շիրականուր գյուղի տեղամասում հանձնարարվել է տեղակայել 1.26 ճանապարհային նշաններ,

1.2. «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲ ընկերության հանձնարարվել է ուսումնասիրել Մ-6 ավտոճանապարհի Թումանյան քաղաքի տեղամասում հեղուկների անվտանգ տեղաշարժի հնարավորությունը,

1.3. «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերությանը հանձնարարվել է Մ-2 ավտոճանապարհի Գորայք գյուղի տեղամասում տեղակայելու 1.26 ճանապարհային նշաններ.

2. Տրվել են պարզաբանումներ՝

2. 1. ՀՀ փաստաթանների պալատի՝

2.1.1. փաստաթան Գ. Մելիքյանին S-2-15 ավտոճանապարհը Արարատի մարզպետարանի տնօրինությանն է,

2.1.2. փաստաբան Ն.Պետրոսյանին Մ-2 ավտոճանապարհի ՈԿՖ-ի կամրջի տեղամասում ճանապարհային երթևեկության կազմակերպման վիճակի մասին, նույն տեղամասի վերաբերյալ փաստաբան Մ. Մարգարյանի հարցման վերաբերյալ.

2.2. ՀՀ վարչական դատարանի հարցումների կապակցությամբ՝

2.2.1. Մ-1 ավտոճանապարհի Պոռշյան գյուղի տեղամասի ճանապարհային երթևեկության կազմակերպման մասին,

2.2.2 Մ-2 ավտոճանապարհի Արտաշատ քաղաքի տեղամասում երթևեկության արագության սահմանափակումների մասին,

2.2.3. Վաղարշապատի Մանուշյան փողոցի հարցով Վաղարշապատի քաղաքապետարան դիմելու մասին,

2.2.4. Մ-4 ավտոճանապարհի 80+500 կմ տեղամասում 3.24 ճանապարհային նշանի առկայության մասին (2 անգամ),

2.2.5 Մ-3 ավտոճանապարհի Կարբի գյուղի տեղամասի ճանապարհային երթևեկության կազմակերպման մասին,

2.2.6. Հ-3 ավտոճանապարհի Ջրվեժ գյուղի տեղամասում 5.23.1 «Բնակավայրի սկիզբ» ճանապարհային նշանների առկայության մասին,

2.2.7. Մ-5 ավտոճանապարհի Պտղունք գյուղի տեղամասի ճանապարհային երթևեկության կազմակերպման մասին,

2.2.8. Մ-4 ավտոճանապարհի Դիլիջան քաղաքի Թբիլիսյան խճուղում ճանապարհային երթևեկության կազմակերպման մասին:

2.3. Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքի ղեկավարին պարզաբանվել է Մ-4 ավտոճանապարհի 14-րկ կմ-ում հետադարձի տեղի բացման աննպատակահարմարության մասին.

2.4. Գառնի գյուղի բնակիչ Հ. Խաչատրյանին պարզաբանվել է Հ-3 ավտոճանապարհի և գյուղի Շահումյան փողոցի հատման տեղում ճանապարհային երթևեկության կազմակերպման վիճակի բարելավման մասին.

3. Կարծիք է ներկայացվել՝

3.1. Շիրակի մարզային դատախազությանը՝ Շիրակի մարզի տարածքում ավտոճանապարհների վիճակը բարելավելու միջոցառումների վերաբերյալ,

3.2. Հ-9 ավտոճանապարհի Այգեստան գյուղում տեղակայված արհեստական անհարդուությունների վերաբերյալ,

3.3 քաղաքացի Հ. Ազարյանի կողմից ներկայացված ճանապարհային երթևեկության կազմակերպման բարելավումների առաջարկությունների մասին,

3.4. «Կամուրջին» ՓԲ ընկերության ներկայացրած գծապատկերի կազմման և աշխատանքի իրականացման գործառույթի մասին,

3.5. կարծիք է կազմվել Մ-4 ավտոճանապարհի և Վերին Պտղնի գյուղի 4-րդ փողոցի հատման տեղամասում հեղուկության անցման վիճակը բարելավելու ուղղությամբ, ներկայացվել է զեկուցասագիր.

4. Կատարվել է առաջարկություն՝

4.1. քաղաքացի Գ. Աղաբաբյանին՝ իր հարցի կապակցությամբ Տավուշի մարզպետարան դիմելու մասին,

4.2. Հ-2 ավտոճանապարհի «Բեկոն» կազմակերպության տեղամասում երթևեկության անվտանգության ապահովման միջոցառումների մասին,

4.3. Հ-17 ավտոճանապարհի Դալարիկ գյուղի տեղամասում և Լեոնազոգ գյուղի մոտեցման ճանապարհի հատման վայրում երթևեկության անվտանգությունն ապահովելու մասին.

5. Ճանապարհային ոստիկանության հետ համագործակցությունը՝

5.1. պարզաբանում է տրվել Մ-1 ավտոճանապարհի Ոսկեվազ-Ագարակ խաչմերուկում 2.3.1 ճանապարհային նշանի առկայության մասին.

5.2. Մ-7 ավտոճանապարհի Շիրակամուր գյուղի տեղամասում տրվել է 1.26 ճանապարհային նշանների տեղակայման հանձնարարություն.

6. Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին տեղակայելու համար հատկացվել են ճանապարհային նշաններ՝

6.1. «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ-ին՝ 17 հատ,

6.2. «Տավուշի ՃՇՇ» ՓԲԸ-ին՝ 131 հատ,

6.3. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերական նախարարության ՀՀՌ-Ց ընկերության տարածքից հանձնվել են և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն որպես գույք ընդունվել են 1555 մնացորդ ճանապարհային նշաններ ու ցուցանակներ և տեղափոխվել այլ տարածք:

Բոլոր կատարված աշխատանքների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

2. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄ, ԿԱՊԱԼԱՌՈՒ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ
ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1 Կատարված աշխատանքների ընդունման նպատակով միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում: Ավտոմոբիլային ճանապարհների վիճակի գնահատում՝ հաջորդ փուլում պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով

Հաշվետու ժամանակահատվածում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների ընթացիկ ամառային պահպանման, կապալառուների կողմից իրականացված աշխատանքների մասնագիտական հսկողություն հեղուկալ մարզերում:

Մարզի անվանումը	Սպասարկվող ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր երկարությունը, կմ
	Ամառային
Արագածոտն	281.1
Արարատ	217.3
Արմավիր	194.9
Գեղարքունիք	322.9
Կոտայք	290.2
Լոռի	317.3
Շիրակ	259.9
Սյունիք	404.6
Վայոց Ձոր	191.2
Տավուշ	409.9
ԸՆԴԱՄԵՆԸ	2889.2

Ընթացիկ ամառային պահպանման ժամանակահատվածն է՝ ապրիլի 1-ից նոյեմբերի 15-ը:

Կատարվել է համապատասխան գրառումներ գրանցման մատյաններում, որի հիման վրա ընդունվել է կապալառու կազմակերպությունների կատարած ընթացիկ ծմեռային պահպանման աշխատանքները:

Ամառային պահպանման աշխատանքների ընդունումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2010թ. նոյեմբերի 4-ին հաստատված N 1419-Ն կարգի համաձայն:

Բացի վերը նշվածից, անհրաժեշտությունից ելնելով (սողանքներ, փլվածքներ, հեղեղումներ, բողոքներ և այլն) իրականացվել են լրացուցիչ ուսումնասիրություններ:

Բոլոր կատարված հսկողությունների և ուսումնասիրությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

2.2 Կատարված աշխատանքների ընդունման նպատակով ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների, պարսպող համակարգերի պահպանման և գծանշման աշխատանքների աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում: Առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի վիճակի գնահատում՝ հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով

Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների պարբերաբար դիտարկում և գնահատում

Հաշվետու ժամանակահատվածում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների, պարսպող համակարգերի պահպանման և գծանշման աշխատանքների կապալառուների կողմից իրականացված միջոցառումների մասնագիտական հսկողություն, այդ թվում՝

➤ **Թունեցելներ**

- Պուշկինի թունել
- Դիլիջանի թունել
- Նալբանդի թունել:

➤ **Կամուրջներ**

- Արաքս գետի վրայի Մեղրիի կամուրջ,
- Հ-6 Աբովյան - Եղվարդ - Աշտարակ ավտոմոբիլային ճանապարհի Հրազդան գետի վրայի կամուրջ,
- Մ-1 Երևան - Գյումրի - Վրաստանի սահման ավտոմոբիլային ճանապարհի Քասախ գետի վրայի կամուրջ,
- Մ-3 Մարգարա - Վանաձոր - Տաշիր - Վրաստանի սահման ավտոմոբիլային ճանապարհի Ձորագետ գետի վրայի կամուրջ,
- Զերմուկ քաղաքի կամուրջ:

Պահպանման աշխատանքների ընդունումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի կողմից 2010թ. դեկտեմբերի 12-ի N 710-Ն հրամանով հաստատված ընդունման կարգի համաձայն:

➤ **Պարսպող համակարգերի պահպանում և վնասված հատվածների վերականգնում**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող 715.364 կմ ընդհանուր երկարությամբ պարսպող համակարգերի պահպանման կապալառուների կողմից իրականացված աշխատանքների մասնագիտական հսկողություն:

Պահպանման աշխատանքների ընդունումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի կողմից 2011թ. փետրվարի 24-ի N 79-Ն հրամանով հաստատված ընդունման կարգի համաձայն:

Կատարվել է համապատասխան գրառումներ գրանցման մատյաններում, որի հիման վրա ընդունվել է կապալառու կազմակերպությունների կողմից կատարված պահպանման աշխատանքները:

➤ **Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների գծանշում**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների գծանշման աշխատանքների՝ 2229 կմ ընդհանուր երկարությամբ /461312.4մ²/, կապալառուների կողմից իրականացված միջոցառումների մասնագիտական հսկողություն:

Կատարվել է համապատասխան գրառումներ գրանցման մատյաններում, որի հիման վրա ընդունվել է կապալառու կազմակերպությունների կողմից կատարված պահպանման աշխատանքները:

Բոլոր կատարված հսկողությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

2.3 Ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների մշտադիտարկում, հսկողություն և գնահատում

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել են 4 միջպետական նշանակության ավտոճանապարհների 59.442 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների միջին նորոգման թերությունների ակտեր:

Բոլոր կատարված հսկողությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

**3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ /ՆԱԽԱԳԾԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ,
ԳՆՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ,
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ/ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին իրականացվող թվով 1 տրանսպորտային օբյեկտի հիմնանորոգման նախագծի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների ընդունում, թվով 3 օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների հիմնանորոգման աշխատանքների, տեխ. հսկողության և հեղ. հսկողության ծառայությունների գնման հայտերի կազմում, թվով 12 փոխանցիկ օբյեկտների հիմնանորոգման և վերականգնման աշխատանքների մշտադիտարկում, հիմնանորոգման ծրագրով նախատեսված թվով 52 օբյեկտների տեխնիկական և հեղինակային ծառայությունների տեխնիկական բնութագրերի, գնման հայտերի տեխնիկական մասերի մշակում, թվով 40 ճանապարհահատվածների և թվով 2 տրանսպորտային օբյեկտների հեղինակային հսկողության ծառայությունների գնման հայտերի, կապալի պայմանագրերի վճարման համաձայնագրերի կնքման հայտերի կազմում, 2021 թվականի հիմնանորոգման ծրագրով նախատեսված օբյեկտների տեխնիկական բնութագրերի/առաջադրանքի մշակում:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են նաև ՀՀ մարզերից ստացված սուբվենցիայի ծրագրային հայտերը, տեխնիկական բնութագրերը և հայտերի գնահատման նպատակով ներկայացվել են մասնագիտական դիրքորոշում:

Բոլոր կատարված հսկողությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

**4. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ
ԵՎ/ԿԱՄ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ
ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԼԱԲՈՐԱՏՈՐ
ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

Հաշվետու ժամանակահատվածում լաբորատորիան իր գործառույթների ոլորտի շրջանակներում իրականացրել է տնօրինության կողմից հանձնարարված աշխատանքներ:

Համաձայն ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարականի «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի լաբորատորիան իրականացրել է ուսումնասիրություններ, հանրապետության մարզերում և մի շարք համայնքներում, ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին իրականացվող ճանապարհաշինարարական աշխատանքների որակի վերաբերյալ:

Հաշվետու ժամանակաշրջանում լաբորատորիան, համաձայն հանձնարարականի, իրականացրել է աշխատանքներ ընկնող քաշով դեֆլեկտոմետրի միջոցով հետազոտվել է 1.404 կմ ճանապարհահատված:

Երկրորդ եռամսյակում լաբորատորիան համաձայն հանձնարարականի իրականացրել է ուսումնասիրություններ, որի համաձայն վերանորոգվող ճանապարհահատվածներից լաբորատորիա է տեղափոխվել և փորձարկվել ներոհիշյալ քանակի փորձանմուշներ:

- | | |
|---------------------------|----------|
| • Հանուկ | 119 հատ |
| • Ծածկի ամրության որոշում | 1.404 կմ |

Իրականացվել է բյուջեով և վարկային ծրագրերով վերականգնված ճանապարհահատվածների անհարթության գործակցի (IRI) որոշում Dynatest 5051 Mark III սարքավորման կիրառմամբ՝ շուրջ 1.4 կմ ընդհանուր երկարությամբ:

Հետազոտված ավտոճանապարհների ցանկ

N	Ճանապարհի անվանումը	Ընդամենը, կմ
1.	2.	3.
1.	/Մ-4/ - Գեղահովիտ կմ 0.0 – կմ 1+404	1.404
	Ընդամենը	1.404

Բոլոր կատարված հսկողությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում: